## 20. ԲԱԽՏՈՒՆ ԱԽՊԵՐ

Մեկ մարթըմ կիլնը, զինքյն ը, ուր լաճ մընակ:

Կըսը. - Կը շիվարանաս, կէրթաս Ստամբիլ: Անցկուն մարթու խիտ իլիր ինկյիր, ինչ էրկու փայ խաց կը տընի հանճիվ քյի, փայըմ կը տընի հանճիվ ուր: Անցկուն մարթու խիտ մ'իլնիր ինկյիր, ինչ էրկու փայ կը տընի հանճիվ ուր, փայըմ կը տընի հանճիվ քյի:

Էն էլ կը շիվարանա, կէրթա Ստամբիլ: Մեկ մարթըմ ռաստ կը գա:

Կըսը. - Դի՞ւր տ'էրթաս:

Կըսը. - Տ'էրթամ Ստամբիլ:

Կըսը. - Իսն էլ կէլնիմ քյի ինկյիր:

Կէրթան խա ճամբխին, կանուբթանան, խաց կը խանին, օր ուտին: էրկու փայ կը տընի հանճիվ ուր, փայըմ կը տընի հանճիվ տըղին:

Կըսի. - Իս խա քյի չըմ իգա Ստամբիլ, իս հիւրիւշ կընար վե կէրթամ:

Կէրթա ճամբախ, հիւրիւշ մարթ մ' էլ ռաստ կը գա:

Կըսը. - Դի՞ւր տ'էրթաս:

Կըսը. - Տ'էրթամ Ստամբիլ:

Կըսը. - Իս էլ քյի ինկյիր: Իս, տիւ մեկ տեղով էրթանքյ:

Կըսը. - Խաց խա՛ն, ուտինքյ, յանքյ:

Տեսնը՝ էրկու բահըր կը տընը հանճիվ ուր, բահրըմ կը տընի հանճիվ լաճուն:

Կըսի. - Իս խա քյի չըմ իլնի ինկյիր:

Կէրթա, մարթ մ'էլ ռաստ կը գա:

Կըսը. - Տըղա՛, տ'էրթաս դի՞ւր:

Կըսը. - Տ'էրթամ Ստամբիլ:

Կըսը. - Տըղա՛, իս, տիւ իլնինքյ ախպեր, էրթանքյ:

Կըսը. - Դե խաց խան, ուտինքյ, յանքյ:

Տեսնա էրկու փայ կը տընի հնռճիվ լաճուն, մեկ փայ՝ ուր:

Ան էլ կըսը. - Նուր իս, տիւ էլանքյ ախպեր:

Կէրթան Ստամբիլ: Յոթ տարը լաճ կը խիվընդընա: Մարթն կիլնը, զան յոթ տարը կը շախը: Լաճ կը ժըրը, կիլնին, կը գան էրկիր:

Ախպեր կըսը. - Իլի՛, էրթանքյ էրկիր, էլ մի՛ նըստիլ, ըստա փարա չանի:

Լաճն էլ կըսը. - Ձի փարա չըկա, քյի կա, տիւ մալը տեր իս, իս չէ, ի՞նչըխ տ'էրթանքյ:

Մարթն էլ կըսը. - Իս, տիւ ախպեր ինքյ, մեկ մազ էլ իլնը, իս, տիւ խալալ տը կիսինքյ:

Կը թըղնին, կը գան: Կը գան մեկ գյեղըմ:

Կըսի. - Մի գյիշիրվա'մ տեղ տըվեքյ, մնանքյ չում առավոտուն: Առավոտուն կէրթանքյ խա մի ճամբխին:

Ռեսն էլ կըսը. - Ըստեղ խան կա, վիվ էրթա հինը, կը մեռնը, առավոտուն կը տանին, խուրին: Քյի կը պի, գյընա՛ էն խան:

Էն էլ կէրթա խան:

Կըսը. - Մեռնիմ, թըխ խան վե մեռնիմ:

Կէրթան խան: Լաճ կը քյընը, ախպեր կը մնա հաշար: Տեսնա՝ մեկ հաջլաջեբ, յոթ գյըլխեն պա մ'իրը:

Մարթն էլ ըզթուր քյեշից, էզար, ատ հաջլաջեբ զատ ըսպանից:

Գյընաց անու տուն, տիսավ կնիկըմ գի էնտիղն ը, կուղ իլիր, քյընիր: Կնիկն էլ շատ խիրատ կնիկ ը:

Տեսավ էօցըմ իրը, զինքյ էզար կընկան պերան վե, գյընաց կընկան փուր: Ըզկնիկ քյընուց էխան վե:

Կնիկ էսաց. - Աստծո՛ւ սիրուն, փախը՛, քանի ան հաջլաջեբ զատ չիկիր, ըզքյի կիրիր:

Մարթն էլ էսաց. - Հաջլաջեբ սպանիր իմ: Տառնանքյ ըստիւցա, էրթանքյ միր էրկիր:

Էլավ, ըզլաճ քյընուց էխան վե:

Էսաց. - Իլի՛, պառնա՛նքյ, յա՛նքյ:

Էլան, պառցին, քառնուն մեկ բերգյրը պեռ մալ էլավ: Իկին կես ճամբխին:

Էսաց. - Ախպե՛ր, դարիս քու գյեղ մարթխըսցավ: Մինքյ ըստա տը պաժվինքյ:

Լաճ էսաց. - Ձի զատ չկա, օր պաժվինքյ: Ձըմեն քու մալն ը:

Մարթն էլ էսաց. - Քանի օր իս, տու ախպեր ինք, մալը կես՝ ձի, կես՝ քյի:

Էսաց. - Քըսան պեռ ձի, քըսան՝ քյի:

Մեկ բերգյիր մնաց հավլը:

Էսաց. - Էն մեկ բերգյիր հավլը տար քյը խամար, տու շատ իս պանիր:

Էսաց. - Ձի՛լնը, իս, տու ախպեր ինք: Տը կիսինքյ: Քյի ոռո՞ւ կընար, թի՞ գյըլխու կընար:

Լաճ նահլաջացավ էսաց. - Ձի ոռու կընար:

Թուր քյեշից, էրի մատ բերգյիր: Էզար, կես տեղ հինի կըտրից:

Էսաց. - Դար կնիկ տը կիսինքյ:

Էսաց. - Կնիկ տու պիրիր իս, քյը խամար իս պիրիր, անիկ պիրոզ իլնը քյի:

Կնիկ վախացավ, էսաց. - Ի՛նչըխ բերգյիր արին, խա ձի էլ տ'անին:

Մարթն էսաց. - Կնիկ մը՛ սպանի, միխքյ ը, տար քյը խամար:

Էսաց. - Չէ՛, իլահի տը սպանիմ:

Թուր վիրուց վար կընկան, լաճուն էսաց. - Քյի ոռո՞ւ կընար, թի՞ գյըլխու կընար:

Ինչ ըզթուր վիրու՛ց, իպը, կնիկ ոռծըկաց, էօց պերնեն թըռավ:

Էսաց. - Դե՛, ա՛ռ: Նա՛ կնիկ, նա մալ, նա՛ բերգյըրքյիր, ինչ կա, տըվիր իմ քյի: Տա՛ր քյը խամար:

Ինքյ կորսավ: Մարթ ուր մալ առից, իրը տուն: Փըսագվավ, նըստավ:

Էն խասավ ուր մըրազին, տու էլ՝ քուն: